ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

18 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2020 թ.

№ 9 (1059)

Թերթի առաջին համարը լույս է տեսել 1965 թ. մարտի 11-ին
Երկշաբաթաթերթ ● հրատարակման 55-րդ տարի

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԴԱՇՏՈՆԱԹԵՐԹ

2020-Ի ՍԵՊՏԵՄԲԵՐԸ՝ ԱՐՏԱՍՈՎՈՐ ՈՒ ԱՐՏԱԿԱՐԳ

Յուրաքանչյուր սեպտեմբեր իր խորհուրդն ունի, որն արտացոլում է կրթության ու գիտելիքի ձեռքբերման հանդեպ հայ մարդու ձգտումը: Ցավոք 2020 թվականն իր տագնապահարույց ժահրով ախտահարեց մեր կյանքի բոլոր ոլորտները, այդ թվում՝ նաև կրթության: Ամենատարբեր հարթակներից հնչած ելույթներն ու հռետորական հարցադրումներն էլ՝ օգտակար կամ՝ ոչ, չլցրին մեր կյանքը, այդպես էլ անպատասխան թողնելով շատ հարցեր:

Անկախ ժամանակի մարտահրավերներից, որքան էլ դժվար է, Մանկավարժական համալսարանը շարունակում է իր ընթացքը՝ դարի մարտահրավերների մեջ փորձելով գտնել արդյունավետն ու օգտակարը, ճշմարիտն ու կարևորը, բայց մեծ ջանքերի գնով…

Լսելով կրթության փորձագետներին ու ոլորտի փորձառուներին՝ մի եզրակացության կարելի է հանգել՝ այլևոչինչ առաջվանը չի կարող լինել… Բայց պետք է անգամ ամենաանհուսալի իրավիճակներում դեպի լույսն ընթանալու, աշակերտին և ուսանողին գիտելիքներ հաղորդելու ելքեր գտնել՝ անկեղծ, ոչ շինծու հայացքով ու միտումով…

Ինչևէ: Անսովոր ու արտակարգ այս ուսումնական տարում Մանկավարժական համալսարանի հիմնական դպրոցում բացվել է երկու 1-ին դասարան՝ 31-ական աշակերտով, իսկ համալսարանի ավագ դպրոց վարժարանի հումանիտար, մշակութային, բնագիտամաթեմատիկական հոսքերը համալրվել են 157 սովորողներով: Համալսարանի բակալավրիատ է ընդունվել շուրջ 1000 ուսանող:

Բարի գալուստ Մանկավարժական, որի բոլոր ստորաբաժանումները միտված են սովորողներին զինել գիտելիքներով ու կյանքի դասերով:

Արամայիս ՍԱՀԱԿՅԱՆ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵ՛Ր, ԽՈՆԱՐՀՎՈՒՄ ԵՄ ՁԵՐ ԱՌՋԵՎ

Ի՞նչ կմնար մարդկությունից, տե՛ր Աստված,
Թե չունենար ուսուցիչներ, դպրոցներ:
Ահա ինչու՝ ամբողջ հոգով և սրտանց-
Ուսուցիչնե՛ր, խոնարհվում եմ ձեր առջև:

Ամեն մարդ էլ…ունի սիրած ուսուցիչ,
Հանճարն անգամ…Ուսուցիչ է ունեցել:
Դուք՝ անանո՞ւն, ձեր սաները՝ անվանի:-
Ուսուցիչնե՛ր, խոնարհվում եմ ձեր առջև:

Ախ, շա՞տ հաճախ տառապել եք անաղմուկ,
Լույս եք ցանել, բայց հալածվել ու խաչվել:
Տիրողները՝ շքեղաշո՞ւք, դուք՝ անշո՞ւք…
Ուսուցիչնե՛ր, խոնարհվում եմ ձեր առջև:

Շատ դժվար էր խավար դարում ձեզ համար:
Այս լույս դարում, օ՜, դժվա՛ր է առավել-
Երեխաներն ամե՛ն ինչ էլ գիտեն լավ…
Ուսուցիչնե՛ր, խոնարհվում եմ ձեր առջև:

Թեկուզ կյանքում ապտակել եք նաև ինձ,
Թեկուզ նաև երկուսներ եմ ստացել,
Այնուհանդերձ, այնուհանդերձ, էն գլխից-
Ուսուցիչնե՛ր, խոնարհվում եմ ձեր առջև:

Հողագունդը գլոբո՞ւս է հմայիչ,
Բայց ուզում են այն կործանել ու ջարդել:
Հողագնդին հարկավոր է ուսուցիչ…
Ուսուցիչնե՛ր, խոնարհվում եմ ձեր առջև:

ՄԵՐ ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆԸ

«Հայրենիք ենք հիմնել, Հայրենիք ենք բարչրացնում…Հայրենիքը պահանջում է իր բոլոր որդիների, մեր ամենամյա, ամենօրյա, այսժամյա հավատավոր ջանքը»:

Հրանտ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՄԵՐ ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆԸ

Օգոստոսի 23-ին լրացավ «Հայաստանի անկախության մասին» հռչակագրի 30-րդ տարեդարձը: 1990 թվականի օգոստոսի 23-ին Հայաստանի խորհրդարանն ընդունեց Անկախության հռչակագիրը; Այն հիմնարար իրավական փաստաթուղթ էր, որը նախանշում էր անկախություն ճանապարհին Հայաստանի քաղաքական, տնտեսական, մշակութային զարգացման ուղիները:

Անկախության հռչակագրից մեկ տարի հետո՝ 1991 թվականի սեպտեմբերի 21-ին, անցկացվեց անկախության հանրաքվե, և Հայաստանի ժողովուրդը ձայների ճնշող մեծամասնությամբ քվեարկեց ԽՍՀՄ-ի կազմից դուրս գալու և անկախ պետություն ստեղծելու օգտին: 70 տարի անց հայ ժողովուրդը վերահաստատեց անկախ ապրելու իր ձգտումը, իրականացրեց իր դարավոր իղձը:

Անկախության հռչակագիրը ոչ միայն սոսկ անկախություն էր հայ ժողովրդի համար, այլև գիտակցական մեծագույն պատասխանատվություն, որը յուրաքանչյուր հայաստանցի պիտի կրեր ըմբռնումով ու սիրով: Թե ինչ տվեցին անկախության 30 տարիները հայ ժողովրդին, միանշանակ հնարավոր չէ ձևակերպել: Առաջընթացի ու նոր տիպի գործունեության ընթացքում կառավարման ոլորտի բազում սխալների արդյունքում երկրի առաջընթացը դանդաղեց, մեր երկիրը հետ մնաց ժամանակակից զարգացումների ուղեծրից… Մինչդեռ Անկախության հռչակագիրը միջոց ու ձև էր՝ իրականացնելու հայ ժողովրդի ինքնուրույն ապրելու կամքը:

21-րդ դարի Հայաստանը փորձում է հաստատել իր տեղը արևի տակ, Երկիր մոլորակի յուրաքանչյուր պտույտի հետ փորձում առավել հաջողություններ ամրագրել ներքին ու արտաքին քաղաքականության ոլորտում: Երկրի հաջողությունները պայմանավորված են նաև յուրաքանչյուրիս պետական մտածողությամբ, պատասխանատվության ու ըմբռնումի մակարդակով:

Այդ դեպքում միայն կարող ենք խոսել անկախության գաղափարների հռչակման ու իրականացման մասին:

Շնորհավո՛ր, Անկախության տոնդ, Հայաստա՛ն:

Թերթի նոր համարները կարող եք կարդալ Մանկավարժական համալսարանի aspu.am պաշտոնական կայքում:

Կայացավ ՀՊՄՀ Գիտական խորհրդի նիստը

Հայ նոր և նորագույն գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Սուրեն Դանիելյանը ներկայացրեց արդեն 4-րդ տարին անցկացվող Ռուբեն Սևակի անվան ամենամյա մրցույթի արդյունքները: Պրոֆեսորը ցավով նկատեց՝ համավարակի պատճառով Ռուբեն Սևակի կենսագրական, հասարակական գործունեության և գրական բարձր շերտերը քննող խոհագրությունների մրցույթին այս տարի քիչ թվով ուսանողներ են մասնակցել: Ներկայացված աշխատանքներից չափանիշներին համապատասխանել է միայն 1 աշխատանք: Ռուբեն Սևակի անվան մրցանակն այս տարի հանձնվեց Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետի հեռակա ուսուցմամբ 1-ին կուրսի ուսանող Նարեկ Մովսիսյանին:

Դեկանների ընտրություն

Գիտական խորհրդի նիստի օրակարգային 1-ին հարցը 2 ֆակուլտետների դեկանների ընտրությունն էր: Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի դեկանի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին մասնակցում էին հոգեբանական գիտությունների թեկնածուներ, դոցենտներ Ռուզաննա Պետրոսյանն ու Լևոն Սարգսյանը, իսկ Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետում՝ 4 թեկնածու՝ ֆիզմաթ գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գագիկ Դեմիրխանյանը, ֆիզմաթ գիտությունների թեկնածու, դոցենտ Վաղարշակ Ոսկանյանը, մանկավարժական գիտությունների թեկնածուներ, դոցենտներ Պետրոս Պետրոսյանը և Վարուժան Վարդապետյանը:

Դեկանների թեկնածուները ներկայացրին ֆակուլտետների զարգացման իրենց ծրագրերը, սեփական տեսլականը՝ ուսանողակենտրոն քաղաքականության, համագործակցության ընդլայնման, աշխատաշուկայում կայուն տեղ գրավելու և այլ հարցերի վերաբերյալ:

Գիտական խորհրդի փակ գաղտնի քվեարկության արդյունքում Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի դեկան վերընտրվեց Ռուզաննա Պետրոսյանը, իսկ Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետում՝ Գագիկ Դեմիրխանյանը:

Ընթացիկ հարցեր

Ուսումնական գործընթացների հարցերով պրոռեկտոր Միհր Մելիք-Բախշյանը Գիտական խորհրդի անդամների հաստատմանը ներկայացրեց Պարարվեստի մանկավարժության, Ռոմանագերմանական լեզուների, Ռուսաց լեզվի ամբիոնների անվանափոխության հարցը: Գիտական խորհուրդը միաձայն հաստատեց ամբիոնները՝ համապատասխանաբար Պարարվեստի մանկավարժության և նրա դասավանդման մեթոդիկայի, Ռոմանագերմական լեզուների և նրանց դասավանդման մեթոդիկայի, Ռուսաց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի վերանվանելու հարցը:

Աշխատակազմի և միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր Արա Երեմյանն էլ Գիտական խորհրդի անդամների հաստատմանը ներկայացրեց ՀՊՄՀ դասախոսների և վարչական աշխատակիցների շարժունության իրականացման, ՀՊՄՀ-ում սովորողների և համալսարան ժամանող օտարերկրյա սովորողների ակադեմիական շարժունության իրականացման և ՀՊՄՀ դասախոսների և վարչական աշխատակիցների՝ միջազգային դրամաշնորհային ծրագրերին մասնակցության կարգերը:

Պատմության և հասարակագիտության ֆակուլտետի դեկան Էդգար Հովհաննիսյանը ներկայացրեց անվանական կրթաթոշակների հավակնորդների թեկնածուներին:

Ավանդույթի համաձայն ռեկտոր Ռուբեն Միրզախանյանը շնորհավորեց նաև հոբելյարներին:

Քրիստինե ՄԵԼՔՈՆՅԱՆ

Կրկին սեպտեմբերի 1, բայց այս անգամ դպրոցի պատերից դուրս՝ Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի ջերմ մթնոլորտում, որտեղ բոլոր առաջին կուրսեցիները շփոթված և ոգևորված փորձում են ինտեգրվել ուսանողական նորաթուխ կյանքի ոչ այնքան սովորական առօրյային:

Հաճելի է, երբ միջանցքում պատահաբար հանդիպում ես քեզ անծանոթ դասախոսներին և հասկանում, որ տարիների ընթացքում նրանք կդառնան ծանոթ ու մտերիմ, ավագ ընկերներ: Միաժամանակ անսպասելի է, երբ երկրում հաստատված արտակարգ դրության պատճառով կուրսեցիներիդ տեսնում ես միանման դիմակներով և փորձում ես նրանց տարբերվող աչքերում գտնել այն ընկերական ջերմությունն ու հարգանքը, որն ամենակարևորն է լինելու ուսանողական տարիների ընթացքում:

Տպավորված եմ Պատմության և հասարակագիտության ֆակուլտետի դեկանի, դասախոսական անձնակազմի, ինչպես նաև ուսանողական խորհրդի անդամների կողմից մեզ տրված այն կարևոր տեղեկություններից, որոնք հիմք կհանդիսանան ընտրածս մասնագիտության՝ հասարակագիտության կարևորությունը հասկանալու, մասնագիտական ունակություններ ձեռք բերելու և վստահ լինելու համար, որ ստացածս գիտելիքներն արդյունավետ կօգտագործեմ կառուցելու այն ապագան, որը կօգնի առաջ մղել թե՛ իմ, թե՛ հասարակության և թե՛ երկրիս նպատակները:

Համոզված եմ, որ բարձր կպահեմ Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի ուսանող լինելու կոչումն ու պատիվը:

Անի ԱՎԱԳՅԱՆ
Պատմության և հասարակագիտության ֆակուլտետի 1-ին կուրս

ՕՐ ԱՌԱՋԻՆ

Առաջին օր, առաջին տպավորություններ և կյանքի նոր փուլի սկիզբն ազդարարող ուսանողական առաջին զանգ…

«Բարև օր». ասացի ու սովորականի պես սկսեցի օրս: Ինչքան անսովորություն կար այդ սովորական օրվա մեջ: Հարցականների երկար ճանապարհն առավոտյան ինձ հասցրեց Երևանի՝ Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան: Մտա համալսարան, տեսա դասացուցակս, ծանոթացա առարկաներին, որոնք դառնալու են առօրյայիս մի մասը, հասա լսարան, ծանոթացա համակուրսեցիներիս, հետո որոշ դասախոսների հետ ու վերջապես ինձ որպես ուսանող զգացի: Առաջին բանը, որ նկատեցի, խստության ու ազատության ճիշտ համադրումն էր:

Պետք է խստություն՝ որակյալ կրթություն ստանալու համար, բայց նաև ազատություն՝ սեփական մտքերից չհրաժարվելու և յուրովի ներկայանալու համար: Այն, ինչ տեսա ու զգացի, կարելի է միայն ձևակերպել «նոր» բառով. նոր միջավայր, նոր մարդիկ, նոր ծանոթություններ, նոր կանոններ, նոր հասկացություններ ու նոր շունչ: Այս ամենի մեջ ինձ մի փոքր վշտացրեց այն փաստը, որ դասերն առցանց են լինելու, սակայն լսելով մեր շատ սիրելի դեկան Հեղինե Խաչատրյանի խոսքը, շատ ոգեշնչվեցի և առաջնորդվում եմ նրա խորհուրդներով: Շատ շնորհակալ եմ մեր բոլոր դասախոսներին մեծ աշխատանք իրականացնելու համար: Ինձ թվում է, որ լավ օրեր դեռ շատ կունենանք:

Սոնա ԱԲՐԱՀԱՄՅԱՆ
Սկզբնական կրթության ֆակուլտետի Տարրական մանկավարժություն և մեթոդիկա բաժնի 1-ին կուրս

Ուզում եմ երգով միավորել ողջ ազգին...

ՀՈԲԵԼՅԱՆ

Մեր հարցազրույցը երաժիշտ, երգահան, երաժշտական պրոդյուսեր, ՀՀ վաստակավոր արտիստ, ՀՊՄՀ երաժշտության ամբիոնի ամբիոնի վարիչ, դոցենտ Արա ԳԵՎՈՐԳՅԱՆԻ հետ

- Տարին հոբելյանական էր Ձեզ համար, անցյալն արժևորելու, ձեռքբերումներն ամփոփելու ևս մեկ հնարավորություն: Տարիների հեռվից ինչպե՞ս է Արա Գևորգյանը բնութագրում անցած ճանապարհը:

- Անցել եմ երաժշտական ահռելի մեծ ճանապարհ և բարեբախտաբար ունեցել եմ շատ հաջողություններ: Համերգներով հանդես եմ եկել տարբեր երկրներում, ինչպիսիք են ԱՄՆ, Կանադա, Ֆրանսիա, Ավստրալիա, Արգենտինա, Ուրուգվայ, Բրազիլիա, Կիպրոս, Լիբանան, Սիրիա և այլուր: Թողարկել եմ 9 ձայնասկավառակ, 9 տեսաերիզ: Ստեղծել եմ բազմաթիվ երգեր, քայլերգեր և օրհներգեր, տեսահոլովակներ, որոնք օգտագործվել են մեր քաղաքների, համալսարանների, ֆուտբոլային ակումբների և շատ այլ սպորտային միջոցառումների համար: Այդ ամենն արել եմ անվճար: Մի խոսքով, անցել եմ երանելի ճանապարհ: Փառք Աստծո:

- Դո՞ւք ընտրեցիք երաժշտության ասպարեզը, թե, նա՝ Ձեզ. Արմեն Տիգրանյանի անվան երաժշտական դպրոց, Երևանի № 8 գեղարվեստի ուսումնարան, Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտ... Դա՞ էր ուսումնառության, մասնագիտական զարգացման և փորձառության ուղին, որ ճանաչում ու համբավ բերեց Արա Գևորգյանին:

- Մինչև երաժշտական կրթություն ստանալն արդեն նվագում էի դաշնամուրի վրա: Սակայն շնորհակալ եմ մայրիկիս՝ սիրված երգչուհի, ժողովրդական և գուսանական երգի փայլուն կատարող Վալյա Սամվելյանին, որ ինձ ուղղորդեց ստանալ երաժշտական կրթություն: Շնորհակալություն իմ բոլոր դասախոսներին:

Հաջողության հասնելու բանաձևն իմ կարծիքով տաղանդից հետո կրթությունն է, ապա աշխատասիրությունը:

- Մանկավարժականը՝ Ձեր կյանքում ու կենսակերպում... Ի՞նչ ասել է դասավանդել մեր օրերում... Ի՞նչ խնդիրներ կան:

- ՀՊՄՀ-ն շատ կարևոր դեր ունի բոլորիս կյանքում, լինելով մանկավարժներ պատրաստող բուհ: Դասավանդելն, անշուշտ, գերագույն հաճույք է և պատասխանատվություն: Նաև կա լավագույն ուսանողով հպարտանալու առիթ: Ցավոք, քչերն են ցանկանում լավ կրթվել և լավ մասնագետներ դառնալ:

Շատ են խանգարում երկրի սոցիալական վիճակն ու ուսման բարձր վարձավճարները:

Իսկ սոցցանցերում անլուրջ ակտիվությունը խլում է ուսանողի թանկարժեք ժամանակը՝ լուրջ կրթություն ստանալու համար:

Կարծում եմ՝ կրթվելն անհրաժեշտ է բոլորի համար: Իսկ հատկապես ինձ համար, կրթվելուց բացի, մեծ դպրոց էր նաև «ՌԱԼԼԻ» նվագախմբում նվագելը և պարբերաբար համերգների և հյուրախաղերի մասնակցելը:

- Ժամանակին եղել եք հեռուստադիտողի կողմից շատ սիրված 3-րդ ալիք ծրագրի երաժշտական ղեկավարը: Կարոտո՞ւմ եք այդ տարիները...

- 90-ականներին դժվար էր մեր ժողովրդի համար: «3-րդ ալիք» հեռուստածրագիրը տալիս էր տեղեկություն և զվարճալի հաղորդումներ: «3-րդ ալիք»-ում թարգմանվեցին և եթեր տրվեցին առաջին հայերեն մուլտֆիլմերն ու ֆիլմերը: Ես ծրագրի երաժշտական ղեկավարն էի: Բոլորը սիրով սպասում էին մեր եթերին:

- Ինչպե՞ս ծնվեց «Ադանա» երգը և ինչպես հաջողվեց ձայնագրել 20 լեզուներով: Այն կարելի՞ է համարել Ձեր այցեքարտը:

- «Ադանա» երգն իմ հեթական ստեղծագործություններից մեկն էր, երբ հայտնվեց ամերիկացի երգիչ Դանիել Դեքերը: Նա առաջարկեց այն դարձնել երգ: Ես, իհարկե, սիրով համաձայնեցի և ուղղորդեցի նրան՝ գրել Ցեղասպանության մասին: Մեկ տարի անց նա զանգահարեց. երգը պատրաստ էր: Հասկացա, որ հարկավոր է տարածել, և սկսվեցին թարգմանության աշխատանքները: Սփյուռքում բնակվող իմ ընկերների շնորհիվ երգը ձայնագրվեց 20 լեզվով: Թողարկվեց «Ադանա» առաջին ձայնասկավառակը 10 լեզվով: Այժմ Յութուբում տեղադրված է 20 տարբեր ազգությունների կատարումներ: Համացանցում կա նաև 7 տեսահոլովակ:

- 2005 թվականին հիմնադրեցիք 40 երաժիշտներից բաղկացած ժողովրդական գործիքների նվագախումբ, որը հետագայում դարձավ Հայաստանի ազգային նվագարանների պետական նվագախումբ: Ո՞րն էր առաքելությունը:

- 2005 թ.-ին Հայաստանում կային 3 հզոր սիմֆոնիկ և 2 ջազային մեծ նվագախումբ: Ազգային նվագարանների մեծ նվագախումբ չկար: Ա. Մերանգուլյանի անվան ժողովրդական գործիքների նվագախումբը լուծարված էր տարիներ առաջ: Ես ձեռնամուխ եղա ստեղծել ազգային նվագարանների հզոր նվագախումբ: Հայտարարվեց մրցույթ-փառատոն, և հավաքվեց մոտ 80 երաժիշտ:

Երկրորդ փուլում ընտրվեց 40 հոգի: Հարցումների արդյունքում պարզ դարձավ, որ բոլոր երաժիշտներն ավարտել են Հայաստանի պետական կոնսերվատորիան և նվագելու տեղ չունեն: Ես կարողացա իմ ընկերների միջոցով ապահովել փորձերն անցկացնելու տեղ և հրավիրեցի իմ լավ բարեկամ Նորայր Դավթյանին, որպեսզի կազմավորի նվագախումբը և սկսի փորձերը: Նա սիրով համաձայնեց և սկսվեց մեծ աշխատանք նվագախմբի հետ:

Շուրջ 7 ամսվա ընթացքում մենք ունեցանք հիանալի կատարող նվագախումբ: Այդ ժամանակ ես դիմեցի պետական այրերին՝ խնդրանքով, որ նվագախումբը պահպանեն պետական հովանու ներքո: Այսօր մենք ունենք հրաշալի նվագախումբ, որը բարձր որակով կատարում է մեր ազգային երգն ու երաժշտությունը:

- Ո՞րն է ամենահիշարժանը բազմաթիվ համերգներից ու փառատոններից, ի՞նչ առանձնահատուկ հանդիպումներ եք ունեցել երաժշտական ոլորտի հայտնի մարդկանց հետ:

- Իմ համերգներից բոլորն էլ հիշարժան են, հատկապես Բուենոս Այրեսի հրապարակում՝ նախագահի պալատի առջև, ունեցած համերգը, Կիպրոսի 50- ամյակին նվիրված համերգն է, որ Կիպրոսի պառլամենտի հրավերով էինք գնացել, Կրեմլում տեղի ունեցած համերգը և այլն:

Բարեբախտաբար համագործակցել եմ շատ հայտնի երգիչ, երաժիշտների հետ՝ Հովհաննես Չեքիջյան, Էդուարդ Թոփչյան, Կարեն Դուրգարյան, Ջիվան Գասպարյան, Ֆլորա Մարտիրոսյան, Էլվինա Մակարյան, Իեն Գիլլան, Դեմիս Ռուսսոս, Պեդրո Էուստաչե, Ալեքս Ակունյա, Իդեն Ֆարմեր և շատ ու շատ հայ և օտարազգի այլ հրաշալի երաժիշտների հետ: Ինձ հետ բեմահարթակում են Հասմիկ Լեյլոյանը, Արշակ Սահակյանը Նարեկ Պողիկյանը, Արազ Օրդինյանը, Արթուր Սողոյանը, Հակոբ Խալաթյանը, Նորայր և Արմեն Ավետիսյանները և այլն:

Հովհաննես Չեքիջյանի և Էդուարդ Թոփչյանի հետ կատարեցինք «Կանք ու կլինենք» երգը՝ նվիրված Ցեղասպանության 100-րդ տարելիցին:

- Ի՞նչն եք կարևորում այս կյանքում, որ օգնում է Ձեզ ճիշտ ապրել, դիմակայել մարտահրավերներին:

- Ես շատ պահանջկոտ չեմ կյանքի բարիքների նկատմամբ: Ես բավարարվող և հարմարվող եմ դժվարություններին: Հեշտ եմ հաղթահարում դժվարությունները, ճկուն եմ որոշումներ կայացնելիս և ունեմ հրաշալի ընկերներ, որոնք ինձ օգնում են մշտապես:

- Ձեր երաժշտական գործունեությունն արդեն իսկ խոսում է այն մասին, թե ինչ է Հայրենիք կոչվող տարածությունը Ձեզ համար...

- Հայրենիքն ինձ համար և մարդիկ են և տարածք է, որոնց հարկավոր է ջերմ վերաբերմունք: Ես մշտապես վերադարձնում եմ այն ջերմությունը, որ ստանում եմ ամեն օր փողոց դուրս գալով: Հիանում եմ մեր նվաճումներով ու տխրում ձախողումների դեպքում, զայրանում երկրիս հանդեպ անտարբերների վրա: Մի խոսքով՝ շատ զգայուն եմ ու շատ եմ սիրում մեր երկիրը:

- Մեր ընթերցողների համար կգաղտնազերծե՞ք Ձեր առաջիկա անելիքներից մի քանիսը:

- Հիմա աշխատում եմ 2 մեծ նախագծի վրա: Առաջինը գրել եմ մեր բանակին ոգևորող երգ, որտեղ ասվում է՝ Հայկական բանակ, մենք քո կողքին ենք: Երգում են մեր սփյուռքի երգիչները ԱՄՆ-ից, Կանադայից, Լիբանանից, Արգենտինայից, Գերմանիայից, Ռուսաստանից, Ավստրալիայից և այլն: Ուզում եմ երգով միավորել ողջ ազգին մեր բանակի շուրջ: արդեն մի քանի ամիս է՝ ձայնագրում ենք երգը տարբեր երկրներում: Շատ շուտով կավարտեմ:

Երկրորդ նախագիծը կրկին տեսահոլովակ է «Սիրեցեք զմիմեանս» երգի հիման վրա, որտեղ մեր հայտնի երգիչների փոխարեն երգում են տարբեր մասնագիտությունների տեր մարդիկ: Սրանով ուզում եմ կոչ անել՝ ավելի բարի դառնալ և չթշնամանալ միմյանց նկատմամբ: Լինենք միմյանց հանդեպ ներող, հանդուրժող: Պահպանենք մեր ավանդույթները և սիրով ապրենք մեր Հայրենիքում:

- Պարոն Գևորգյան, սրտանց շնորհավորում եմ Ձեզ հոբելյանի առթիվ մեր ընթերցողների և Ձեր երաժշտական ստեղծագործությունների բոլոր երկրպագուների անունից: Մաղթում եմ, որ երաժշտության հանդեպ Ձեր սերն ու հսկայական ձեռքբերումները ջերմությամբ լցնեն յուրաքանչյուր հայի հոգին՝ միավորելով բոլորին մարդասիրության, հանդուրժողականության ու հայրենաճանաչության գաղափարների շուրջ:

Հարցազրույցը՝ Սիլվա ԱՍՐՅԱՆԻ

ԱՇԽԱՏԱԺՈՂՈՎ ԱՐՑԱԽՈՒՄ

Արցախի պետական համալսարանում կայացել է հեռավար ուսուցման հարթակի ներդրմանը նվիրված աշխատաժողով: Այն վարել է Մանկավարժական համալսարանի կրթության կառավարման բաժնի պետ Անուշ Սարգսյանը: Վերջինս կրթության կազմակերպման գործընթացի արցախցի գործընկերներին է ներկայացրել «Google for Education» հարթակի «Google Classroom» հավելվածը, առանձնահատկությունները, գործիքակազմը, առավելությունները:

Արցախի պետական համալսարանում հեռավար դասերն անց են կացվել zoom հարթակի միջոցով, որն իր թերություններն ուներ: Էլեկտրոնային նոր հարթակը հնարավորություն է տալու ուսուցման լսարանային տարբերակը համադրել առցանց եղանակին՝ նպատակ ունենալով բարձրացնել ուսուցման որակն ու արդյունավետությունը: Օգոստոսի 17-23-ն անցկացված աշխատաժողովը համակարգող Անուշ Սարգսյանի իրականացրած արդյունավետ դասընթացների առիթով Արցախի պետական համալսարանի ղեկավարությունը շնորհակալական նամակ է ուղարկել ՀՊՄՀ ռեկտոր Ռուբեն Միրզախանյանին:

Առցանց վերապատրաստումներ Մանկավարժականում

Մանկավարժական համալսարանում «Կրթական ծրագրերի կենտրոն» ՕԻԳ-ի կողմից անցկացվեցին առցանց վերապատրաստումներ նախակրթարանների դաստիարակների համար: Առցանց վերապատրաստումներն անցկացրեցին Մանկավարժական համալսարանի Սկզբնական կրթության ֆակուլտետի նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի դասախոսները: Վերապատրաստումներին մասնակցում էին Հայաստանի տարբեր մարզերի 22 մանկավարժներ: 8 օրերի ընթացքում վերապատրաստողները փոխանցեցին ոչ միայն տեսական, այլև գործնական հմտություններ. ներկայացվեցին տարատեսակ դիդակտիկ նյութեր, կազմակերպվեցին քննարկումներ՝ փորձելով վերապատրաստվողներին փոխանցել առավելագույն մասնագիտական գիտելիքներ և կարողություններ:

Վերապատրաստողների կարծիքով՝ ներկայումս կարևորվում է 5-6 տարեկան երեխաների՝ մանկապարտեզից դպրոց սահուն անցման խնդիրը: Այն իրականացվում է ինչպես մանկապարտեզների ավագ խմբերում, այնպես էլ դպրոցներին կից նախակրթարաններում, որտեղ աշխատող մանկավարժները պետք է տիրապետեն ավագ նախադպրոցական տարիքի երեխաների զարգացման օրինաչափություններին, ուսումնադաստիարակչական գործընթացի առանձնահատկություններին, ունենան որոշակի մասնագիտական կոմպետենցիաներ:

Մանկավարժները շնորհակալություն հայտնեցին վերապատրաստման արդյունավետ և հետաքրքիր անցկացման համար և հույս հայտնեցին, որ դրանք կլինեն շարունակական:

Քրիստինե ՄԵԼՔՈՆՅԱՆ

ԴԱՍԱԽՈՍԸ՝ ՈՒՍԱՆՈՂԻ ԱՉՔԵՐՈՎ. Մարինե ՄԱԹՈՍՅԱՆ

«Լույս ճառագող, անսահման բարի և իհարկե մոտիվացիայի մեծագույն աղբյուր...». ուսանողներից շատերը հենց այսպես են բնորոշում Հայկական պետական մանկավարժական համալսարանի Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետի դասախոս Մարինե Մաթոսյանին, ում մեջ աշխարհագրության հանդեպ անսահման սերն ու նվիրվածությունն առաջացել են դեռևս 8-9-րդ դասարաններում՝ իր աշխարհագրության ուսուցչուհու շնորհիվ: Թեև մինչ այդ որոշել էր շարունակել հոր ճանապարհը և դառնալ տնտեսագետ, սակայն ճակատագիրն այլ ճանապարհ էր կանխատեսել, որն էլ նրան բերեց ՀՊՄՀ Պատմաաշխարհագրության ֆակուլտետ և հենց այդտեղից էլ սկսվեց իր կյանքի նոր, մի փոքր բարդ, բայց և անչափ լուսավոր ճանապարհը:

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՅՈՒՐԱՀԱՏՈՒԿ ՄԱՄՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ Է

Հենց սկզբից էլ եղել է բավականին ակտիվ ուսանողուհի. թղթակցել է մի շարք թերթերի, տպագրել իր հոդվածները: Բայց դեռ այդ ժամանակից էլ փոքրամարմին ու կյանքով լեցուն աղջնակը կանգնել է ամբիոնի առաջ և իրեն դասախոս պատկերացրել՝ չմտածելով անգամ, որ մի օր դա իրականություն է դառնալու: Այնուհետև, ուսմանը զուգահեռ, աշխատել է դպրոցում, իսկ ավարտելուց երկու տարի անց ուսումը շարունակել է ասպիրանտուրայում և, մշտապես առաջնորդվելով «գիտելիքը ուժ է և հնարավորություն» կարգախոսով, կարողացել է հասնել մեծ արդյունքների:

Այժմ աշխարհագրական գիտությունների թեկածու, դոցենտ է, մի շարք գիտական հոդվածների հեղինակ, բազմաթիվ միջազգային գիտաժողովների մասնակից:

«Ուսուցչի աշխատանքից դեպի դասախոսական աշխատանք անցումը շատ սահուն է կատարվել»,-ասում է Մարինե Մաթոսյանը քանի որ երկու դեպքում էլ իր աշխատանքը սովորեցնելն է: Ըստ նրա՝ չկան լավ և վատ ուսանողներ, պարզապես կան ուսման հանդեպ հետաքրքրություն ունեցող և չունեցող ուսանողներ, որոնց մեջ պարզապես պետք է հետաքրքրություն և սեր առաջացնել դեպի նախընտրած առարկան, ինչը կարելի է անել առաջին իսկ հանդիպումից:

«Ես կարևորում եմ ուսանողի հետ առաջին դասը և հանդիպումը, որը պետք է ջերմ լինի, տպավորվի նրա հիշողության մեջ,-ասում է զրուցակիցս,- ապա փորձում եմ ուսանողների համար բացահայտել առարկան, խոսում եմ առանձնահատկությունների մասին՝ նախնական հետաքրքրություններ, ինչու չէ՝ նաև սեր առաջացնելով առարկայի հանդեպ»:

Այսպես ուսանողի մուտքը ավելի դյուրին է, հետաքրքրվածությունը դանդաղ փոխակերպվում է սովորելու ձգտումի և աշխատելու ցանկության:

Մարինե Մաթոսյանը դասախոսություններից ու գործնական պարապմունքներից բացի կարևորում է ամենատարբեր միջոցառումները, որոնք գիտելիքներից զատ ուսանողին տալիս են նաև հաճելի հիշողություններ, որոնք պահպանվում են ողջ կյանքի ընթացքում:

Այս ամենի շնորհիվ Մ. Մաթոսյանին հաջողվում է լսարանում ստեղծել փոխադարձ հարգանքի և վստահության մթնոլորտ, որը դասախոս-ուսանող հարաբերությունների կարևոր բաղադրիչն է: Երիտասարդ դասախոսը կարողանում է ուսանողի մեջ սեր առաջացնել դեպի աշխարհագրությունը, որն ըստ իր աշխարհի ամենայուրահատուկ գիտություններից մեկն է. աշխարհագրական ցանկացած երևույթ հասկանալու համար պետք է ունենալ համապատասխան գիտելիքի բանալին և ժամանակի ընթացքում հավաքելով բանալիների տրցակը՝ մենք կարող ենք հայտնվել աշխարհագրության անսպառ օվկիանոսում ու բացահայտել շատ երևույթների առաջացման պատճառները, իսկ վերջում հասկանալ, որ աշխարհագրությունը գիտություն լինելուց զատ մեծ ներդրում ունի նաև հայրենասիրության, հայրենագիտության և, իհարկե, պետականաշինության գործում:

Մարիամ ՍԱՐԳՍՅԱՆ

ԹԵՐԹԵԼՈՎԱՆՖՅԱԼԻ ԷՋԵՐԸ

«Մենք պետք է պատասխանատվություն կրենք մեր կենսագրության համար...իմ երազանքն է տեսնել այն Հայաստանը, որը կլինի երիտասարդների ձեռքերում...»

Ալբերտ Յավուրյան

Ալբերտ ՅԱՎՈՒՐՅԱՆ

Բազմաթիվ ֆիլմերի կինոօպերատոր, ՀԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ Ալբերտ Յավուրյանը ծնվել է 1935 թ. Գյումրիում: Մանկավարժական համալսարանի կարկառուն դեմքերից մեկը, ով միշտ օրինակ է ծառայել իր մարդկային որակներով թե՛ հարազատ դարձած բնագավառի, թե՛ իրեն շրջապատողների հանդեպ ունեցած վերաբերմունքով:

1964 թ. ավարտել է Մոսկվայի համամիութենական կինոինստիտուտի (ՎԳԻԿ) օպերատորական ֆակուլտետը (Լ.Կոսմատովի արվեստանոց): Կինոուսումն ավարտելուց հետո նշանակում է ստացել է Յալթայի կինոստուդիայում, որտեղ էլ կատարել է ստեղծագործական ինքնուրույն առաջին աշխատանքները:

Նրա համար շրջադարձային էր 1964 թվականը, երբ Ֆրունզե Դովլաթյանի և «Հայֆիլմ» կինոստուդիայի կողմից հրավեր ստացավ մասնակցելու «Բարև, ես եմ» ֆիլմի ստեղծման աշխատանքներին և վերադարձավ հայրենիք:

«Բարև, ես եմ» ֆիլմը ճանաչվել է որպես հայ կինոյի նորագույն շրջանի հայտնություն: 60-ական թվականների համաշխարհային կինոյի ոճին ու ասելիքին համապատասխանող և հայկական ընդգծված հասցե ունեցող այս կինոնկարի ստեղծմանն իր զգալի ներդրումն ուներ Ալբերտ Յավուրյանը: Այստեղ կիրառվեցին, այսպես կոչված, «ազատագրված կինոխցիկի» լայն հնարավորությունները: Բեմադրիչ Ֆրունզե Դովլաթյանի հետ կինոօպերատոր Ալբերտ Յավուրյանն այս ֆիլմի համար արժանացավ Հայաստանի պետական մրցանակի (1967 թ.):

1991 և 1994 թվականներին Իրանում Ա. Յավուրյանը նկարահանել է երկու կինոնկար «Տովարիշչ» և «Ձինապարտ», որը Թեհրանի միջազգային կինոփառատոնում ճանաչվել է որպես «լավագույն օպերատորական աշխատանք»: Ա. Յավուրյանը տասնյակ խաղարկային և վավերագրական ֆիլմերում հանդես եկավ որպես բեմադրող օպերատոր՝ «Երևանյան օրերի խրոնիկա», «Երկունք», «Յոթ երգ Հայաստանի մասին», «Երջակության մեխանիկան», «Մենավոր ընկուզենի» և այլն:

Բազմաթիվ շնորհներով էր օժտված, բայց որպես փորձառու մասնագետ երբեք չէր դավաճանում իր հիմնական մասնագիտությանը, գնահատում էր այլ մասնագիտությունները՝ ռեժիսորին, դերասանին, նկարչին ու դրամատուրգին... Այն եզակիներից էր, ում հետ շատ անվանի բեմադրիչներ երազում էին աշխատել:

Յավուրյանը համագործակցել է հայտնի ռեժիսորներ Ֆ. Դովլաթյանի, Գ. Մելիք-Ավագյանի, Ն. Հովհաննիսյանի, Կ. Գևորգյանի, Դ. Կեսայանցի հետ:

Մեծ կինոօպերատորը աշխատել է նաև Սերգեյ Փարաջանովի հետ: Նրանք միասին նկարահանել են «Աշուղ Ղարիբը», որին հաջորդեց «Խոստովանություն» ֆիլմը, սակայն ռեժիսորի մահվան պատճառով մնաց անավարտ:

Կյանքի վերջին տասը տարիներին՝ սկսած 1977 թվականից, Ալբերտ Յավուրյանը մանկավարժական գործունեություն է ծավալել Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում: Եղել է ՀՊՄՀ Կուլտուրայի ֆակուլտետի Կինոյի և հեռուստատեսության ամբիոնի վարիչը, դասավանդել է «ֆոտոկոմպոզիցիա» և «օպերատորական վարպետություն»:

Ա. Յավուրյան անհատի գործունեությունը միշտ էլ բարձր է գնահատվել թե՛ պետության և թե՛ հասարակայնության կողմից: Նրան շնորհվել է Մովսես Խորենացու շքանշան (1999 թ.) և Թեքեյան մշակութային միության և «Ադամանդակուռ Արարատը» ստեղծագործական վաստակի համար (2005 թ.): Եղել է ճանաչված նաև Հայաստանից դուրս, «Նիկա» միջազգային կինոակադեմիայի անդամ:

Ալբերտ Յավուրյանը մահացել է 2007 թվականի նոյեմբերի 3-ին:



ԱԼԲԵՐՏ ՅԱՎՈՒՐՅԱՆ.

ՀԱՄԱԿՐԱՆՔԻ ՈՒ ՍԻՐՈ ՄԻՋՈՎ

«Ես շնորհակալ եմ ճակատագրի այն բերկրալի պահերի համար, որ ճաշակել եմ կյանքում». տասնյակ տարիների վաղեմություն ունեցող այս տողերը, գրված Ալբերտ Յավուրյանի կողմից, կարծես մի լուսավոր թախիծով վերակենդանացնում են նրան. ժամանակը չի խնայում նաև տաղանդավորներին: Իսկ նա՝ այնպես հաշտ ժամանակի ու ճակատագրի հետ: Աշխարհում նրա աշխարհը կինոն էր, իսկ մեզ մնաց կինոյի գեղեցիկ և զարմանահրաշ ժամանակների լեգենդը:

Գիտեի, որ ծանր հիվանդ է: Զանգահարեցի և ասացի, որ ուզում եմ հարցազրույց վերցնել: Հարցազրույցի սիրտ ու տրամադրություն չուներ, բայց ասաց. «Քեզ չեմ կարող մերժել, մեր տուն պիտի գաս, որովհետև շատ վատ եմ, աշխատանքի չեմ կարողանում գնալ»: Պայմանավորվեցի... ու չգնացի: Չէի կարող իր հետև շատ վատ եմ, աշխատանքի չեմ կարողանում գնալ»: Պայմանավորվեցի... ու չգնացի: Չէի կարող իր շուրջը մշտապես բարություն ու լույս սփռող այդ զարմանահրաշ մարդուն տեսնել ժամանակի հանդեպ խեղճացած և հուզմունքս թաքցնել...

Տարիներ առաջ էր, երբ նշում էինք նրա աշխատանքային կեսդարյա գործունեությունը և ծննդյան 70-ամյակը: Հայ կինոյի տաղանդաշատ ներկայացուցչի, նրբաճաշակ ու խստապահանջ արվեստագետի և հրաշալի մանկավարժի մասին հնչեցին գնահատանքի գեղեցիկ խոսքեր: Իսկ նա, ինչպես միշտ, զարմանալիորեն անկրկնելի և կաղապարներից դուրս. «Ես գաղթական չեմ և երբեք գաղթական չեմ դառնա, ես պետք է ապրեմ նախապապերիս երկրում՝ Հայաստանում: Եվ մի երազանք ունեմ՝ 100 տարվա վաղեմություն ունեցող այս կարպետը 100 տարի հետո էլ թող լինի Հայաստանում»:

Դիպլոմային աշխատանքի՝ «Մեկ փողոցով քաղաք» ֆիլմի գերազանց պաշտպանությունից մինչև «Հայֆիլմ» կինոստուդիա և դեպի մեծ կինո՝ նրա ճանապարհն անցավ կինոարվեստի լավագույն գնահատողների, արվեստասեր հասարակության համակրանքի ու սիրո միջով: Կինոբեմադրիչի ու օպերատորի նրա վառ անհատականության դրսևորման արդյունքում ծնվեցին դասական հնչեղության ֆիլմեր՝ «Բարև, ես եմ», «Երևանյան օրերի խրոնիկա», «Երկունք», «Ապրեցեք երկար», «Մենավոր ընկուզենին», «Երջանկության մեխանիկան», «Օտար խաղեր», «Հրդեհ»: Կինոաստղաբույլի մեծերի՝ Միհր Մկրտչյանի, Սոս Սարգսյանի, Ֆրունզե Դովլաթյանի և մյուսների հետ նրա շփումները անգնահատելի հետագիծ թողեցին, իսկ մեծն Փարաջանովի հետ հանդիպումը՝ («Աշուղ Ղարիբ» ֆիլմը) դարձավ նրա աստեղային ժամը:

Կինեմատոգրաֆիայի հոգին կինոօպերատորն է, այն եզակի մասնագիտության տեր մարդը, ատանց որի կինոն պարզապես գոյություն չունի: Օպերատորությունը մեծ արվեստ է, և այդ արվեստին մեծապես գույն ու հմայք էր տալիս իր ժամանակի ֆենոմենը՝ Ալբերտ Յավուրյանը: 40 տարիների ընթացքում նկարել է 30 ֆիլմ, որոնք հայ կինոյի մեծագույն նվաճումն են: Տարիները չեն խամրեցրել այդ ֆիլմերի փառքը, թեև անվանի կինոօպերատորը երբեք փառքի չի ձգտել: Նրանը հոգու մեծ սերն էր կինոաշխարհի մեծերի ու կինոարվեստի հանդեպ. «Կինոօպերատորությունը մեծ արվեստ է»,-ասում էր նա: այդ սերն էլ օգնեց նրան գտնել այն բանալին, որն առանց բախելու դռներ էր բացում: Այդ սերը նրան բերեց բազմաթիվ պարգևներ ու մրցանակներ, այդ թվում՝ Արվեստի վաստակավոր գործչի, ՍՍՀՄ ժողովրդական արտիստի կոչումներ, «Մովսես Խորենացի» մեդալ, ԽՍՀՄ կինեմատոգրաֆիստների միության «Նիկա» մասնագիտական մրցանակ, ՀԽՍՀ երկու պետական մրցանակ «Բարև, ես եմ» և «Երջանկության մեխանիկան» ֆիլմերի համար, «Երջանկության մեխանիկան», «Ոսկե ծիրան» հատուկ մրցանակ, «Ադամանդակուռ Արարատ» շքանշան (Թեքեյան մշակութային կենտրոն), բազմաթիվ այլ պարգևներ ու շքանշաններ, բայց ամենակարևորը կինոդիտողի համակրանքն էր: մարդկային մի ամբողջ կյանք մի մարդու, որի մտքի ու երևակայության թռիչքների ելակետը աշխարհընկալման անընդգրկելի փիլիսոփայությունն էր, մաքուր ու պայծառ հավատը մարդկային ճակատագրի հանդեպ և պարզ ու անխառն խառնվածքը՝ տարբեր ժամանակների վայրիվերումների հարահոս ընթացքի մեջ:

Նրա շփումը ուսանողների հետ դժվար էր տեղավորել մերօրյա դասախոս-ուսանող կաղապարի մեջ, բառիս ամենալայն իմաստով՝ նա մեծ մանկավարժ էր, ումից կարելի էր անընդհատ սովորել: Մինչև կյանքի վերջին օրերը (նույնիսկ ծանր հիվանդությունից հետո) նա Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Կուլտուրայի ֆակուլտետի կինոյի և հեռուստատեսության ամբիոնի իր արվեստանոցում էր, ուր ամեն ինչ պտտվում էր կինոյի խնդիրների շուրջը...

Նրա ամեն մի խոսքն, ինչպես Թումանյանը կասեր՝ «մի աշխարհ էր», որ արդեն իսկ թևավոր խոսք է դարձել. «Պետք է մտածել հնարավորությունների սահմանների մասին», «Մենք պետք է պատասխանատվություն կրենք մեր կենսագրության համար», «Մենք ունենք մի խնդիր՝ մարդու բովանդակության խնդիրը», «Բարոյականությունը պիտի լինի մեր չափանիշը»...

Նրա հմայքն առանձնահատուկ էր, նա մշտապես ասելիք ունեցող պատկառելի հեղինակություն էր:

Հիմա արդեն Ալբերտ Յավուրյանի աստղը երկնքում ինչ-որ տեղ լույս ու բարություն է սփռում: Կինոարվեստի մեծ անհատականության դասերը սերունդները դեռ կըմբոշխնեն, և յուրաքանչյուր ոք կարող է խոնարհվել այդ մաքուր ու պայծառ մեծության առաջ՝ խորհելով ժամանակի ու տարածության սահմանների մասին...

Միլվա ԱՍՐՅԱՆ

Մոլորակն ինձ մի գարուն է պարտք

Կատուն խախտեց օդում կախված լռությունն ու իր փամփլիկ պոչը քսելով ոտքերիս՝ հիշեցրեց իր գոյության մասին: Ես հասկացա՝ այնքան եմ խորասուզվել մտքերիս հորձանուտում, որ կտրվել եմ իրականությունից: Այդ պահին ինձ աշխարհին կապողը ճոճաթոռս էր, որ մեկ առաջ, մեկ հետ ճոճվելով, մտքերս էր կարդում: Բայց կարծես հոգնեց ու կանգ առավ... Ինձ իմ տուն «հրավիրող» այս պահին չկա, որովհետև դու դեռ տանը չես: Իսկ երբ տանը չես... Երբ տանը չես, պարզապես քայլում եմ, որովհետև երբեմն ոտքերն իրենք իրենց քայլում են, իսկ ուղեղն ինքն իրեն է մտածում, չի ուզում տիրոջն անհանգստացնել: Հասկանում են, որ, մեղմ ասած, տխուր ես, ու չեն խառնում քեզ իրենց գործերին: Երբեք չեմ սիրել գործուղումները: Քո՛ գործուղումները, ինչի պատճառով գիշերը ծանրանում է հոգնած կոպերիս: Դրանք քեզ համար գուցե և հետաքրքիր ու բազմազան են, իսկ ինձ համար՝ դժվար ու ձանձրալի: Առավել ևս այս անգամ, երբ ամեն ինչ տակնուվրա է եղել ինչ-որ թագավարակի պատճառով: Ինչ-որ, մեղմ ասած... Այլևս ոչ մի հեքիաթ չղջիկների մասին: Գոնե իմ սերունդը չի հորինի որևէ լավ բան այդ կիսամուկ-կիսաթռչունների մասին, որովհետև նրանք սպանեցին մեր մեջ թաքնված բյուր հեքիաթները՝ տանը մնալու, աշխարհից կտրվելու, արձակուրդ ունենալու գաղտնի հեքիաթը, որ յուրաքանչյուրիս մեջ թաքուն ապրում էր: Հիմա չկա այդ հեքիաթը: Դուռն աշխարհի առաջ փակելու մտորումներն իրական դարձան: Իսկ դուք ասում եք՝ հեքիաթ: Կոտրվեցին բոլոր բարի հեքիաթները, մոլորվեցին մեր մտքերից, ու երես դարձրեցին: Հեքիաթ, մանկական բանաստեղծություն կամ առակ չղջիկի մասին: Էլ որևէ մեկը չի գրի: Ոմն չղջիկ սպանեց բոլոր հեքիաթները, որոնք դարձան իրականություն՝ դառն ու աղետաբեր, ու մենք արթնացանք մի օր այլ իրականության մեջ: Տանը մնալու հեքիաթը դարձավ իրականություն՝ անպատեհ ու չպլանավորած:

Պատուհանից կախված լիալուսինը ներս սողոսկեց՝ իր հետ բերելով այս գարնան փշատի ու յասամանի՝ հիշողությամբ վերականգնվող բույրը: Ու ես հասկացա, որ մոլորակն ինձ իմ կյանքից գողացած մի գարուն է պարտք: Լուսինն ընկավ սուրճիս գավաթի մեջ, հոգնած լող տվեց, քնեց կատվի հարևանությամբ:

Անուշ ԹԱՍՍԱԼՅԱՆ
Ե. Չարենցի տուն-թանգարանի գլխավոր ֆոնդապահ

Ֆեյսբուքյան գրառում

ԻՆՉՈՒ ԸՆՏՐԵՑԻ ՀՊՄՀ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԸ



Սրտանց շնորհավորում եմ բոլորին Գիտելիքի օրվա և նոր ուսումնական տարվա մեկնարկի կապակցությամբ:

Երբ ասում եմ մանկավարժ, պատկերացնում եմ պատասխանատվություն առաջին հերթին ինքս իմ նկատմամբ, քանզի ես՝ ապագա ուսուցիչս, չեմ կարող կրթել երեխաներին առանց ինքնակրթվելու:

Ընտրելով ամենավեհ մասնագիտություններից մեկը և անցնելով ընդունելության բոլոր դժվարություններով՝ մեզ բախտ է վիճակվել դառնալու Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ բանասիրական ֆակուլտետի ուսանող, ինչն, անկասկած, պատվաբեր է:

Ես այսօր չափազանց ուրախ եմ, քանզի համոզված եմ, որ իմ կյանքի ուղիներից մեկի՝ տակավին ամենակարևորի վերաբերյալ որոշումը ճիշտ եմ կայացրել: Զգում եմ, որ իմ արդեն իսկ սիրելի համալսարանի և ֆակուլտետի անձնակազմն ինձ կօգնի հասնելու բանասերի կոչման վեհ գաղափարին, ինչը կյանքը բացահայտելու և նրա գեղեցիկը տեսնելու մեջ է: Այս ամենն ինձ կօգնի ինչպես մանկավարժության, այնպես էլ կյանքի ասպարեզում:

Գիտելիքը անգնահատելի արժեք է: Ամենևին պատահական չէ, որ հենց այս ֆակուլտետում են ուսանել հայտնի գրողներ, արվեստագետներ և մտավորականներ, ճանաչված մանկավարժներ: Ես լիահույս եմ, որ ուսումնառության տարիներին մենք կզինվենք գիտելիքների ամուր պաշարով, կընկալենք կյանքը նորովի և կփորձենք գեղեցկացնել այն, որքան հնարավոր է՝ ձևավորելով բարեկեցիկ և զարգացած հասարակություն, որի հիմքը որակյալ կրթությունն է: Մանկավարժական հանալսարանը մեզ կտա դրա բանալին, ոսկե բանալին:

Եվ ես գիտեմ՝ այս ֆակուլտետը թե՛ իր պրոֆեսորադասախոսական կազմով, թե՛ կրթամակարդակով ինձ ճիշտ ուղով կառաջնորդի դեպի իմ նպատակը և կլուսավորի կյանքի խճճված ու մութ արահետները: Հաջողություն բոլորիս:

Կառլեն ՆԱԶԱՐՅԱՆ

Լուսավոր գալիքի սպասումով

Տարվա եղանակներից ամենաշատը սիրում եմ ամառը: Դրա պատճառներից մեկը ամառային երկարատև արձակուրդն է: Սովորաբար արձակուրդներին գնում եմ տարբեր վայրեր, այդ թվում ճամբարներ, խաղում եմ ընկերներիս հետ: Ամառային արձակուրդներն արդեն սկսվել են, սակայն այս տարվա արձակուրդներն ամբողջովին տարբերվում են մյուս տարիների արձակուրդներից: Երկիրը սահմանափակումների մեջ է, իսկ մենք՝ մեկուսացած: Չգիտեմ որքան կտևի այս մղձավանջը, բայց հոգուս խորքում զգում եմ, որ ամառվա ընթացքում այսպես էլ շարունակվելու է, ինչը ինձ համար անշափ հուզիչ և անհանգստացնող է: Փորձում եմ գտնել հետաքրքրություններ, ապրել իմ այդ գունագեղ բնությամբ և գեղեցկությամբ: Սիրում եմ իմ բնությունը, իմ հարազատ բնօրրանը, և այս անհանգստությունը փորձում մեղմել՝ իմ հեքիաթային բնության փափուկ գրկում: Կարծում եմ՝ այսպես և սահմանափակումներով կշարունակվի ամառային արձակուրդները, իսկ ես իմ հանգիստը կանցկացնեմ իմ գյուղում, որի ամառային ջերմ և հաճելի օրերը ինձ համար ամենաթանկն են: Այժմ նստած եմ այգու մի ծայրին, և միտքս սավառնում է...

Ցանկանում եմ այսպես ապրել բնության գրկում՝ իմ գեղատեսիլ գյուղում, և չվտանգել իմ և ուրիշների կյանքը, ապրել խաղաղ և հանգիստ անցկացնել արձակուրդներս՝ հույս ունենալով, որ կգան նախկին ուրախ և անհոգ օրերը, և ես կշփվեմ բոլորի հետ անկաշկանդ ու անվախ, ինչպես նաև կհանդիպեմ իմ ճամբարի ընկերներին և ջոկատավարներին, որոնց անչափ կարոտել եմ: Ապրում եմ լուսավոր գալիքի սպասումով:

Ալեքսանդր Դավթյան, 11 տ., գյուղ Կարմիր Աղեկ

Ե՞րբ է գալիս սեպտեմբերը

Ամառն ավարտվում էր, երբ մայրս կամաց-կամաց սկսում էր հավաքել չրերը պատուհանագոգերից, երբ մեր բակը որբանում էր աղմկող երեխաների բացակայությունից: Բոլորի տներից նոր տետրերի, գրքերի ու պայուսակների հոտն էր գալիս. ընկերներս պատրաստվում էին դպրոց գնալ: Ես չէի պատրաստվում, որովհետև այգում աշխատանքները չէին ավարտվել, ես պիտի հասցնեի հավաքել միրգն ու գնալ տարբեր թաղամասերում վաճառելու: Ես չունեցա սեպտեմբերի մեկ. նոր կոշիկներ ու պայուսակ, որովհետև այգում աշխատանքը չէր ավարտվել:

Երբեմն չէի կարողանում դիմադրել բնության գայթակղությանն ու մորս թողնելով այգում՝ փախչում էի այգու խորքերն ու թավալվում խոտերի մեջ, անկուշտի նման ծծում կանաչի բույրը, կլանում արևի ճառագայթներն այնքան, որ մազերիցս արևի հոտն էր բուրում: Հետո հավաքում էի առաջին պատահած ծաղիկներն ու պսակ հյուսում, դնում գլխիս ու ինձ երևակայում հեքիաթի հերոսուհի: Այնքան էի երևակայում, մինչև հեռվից լսվում էր մորս ձայնը: Պսակը գլխիցս գցում էի, վազում մորս մոտ: Մայրս ոչինչ չէր ասում, պարզապես նայում էր դեմքիս. ես ամեն ինչ հասկանում էի: Մայրս էլ էր հասկանում, որ այգուց դուրս հեքիաթն է կանչում: Մայրս բարի էր, նրա ձեռքերից մրգի հոտ էր գալիս, նա ինձ սիրում էր: Մենք, պարզապես, պիտի աշխատեինք:

Ողջ ամառ բոբիկ ոտքերով էի, ավազը կծում էր ներբաններս, բայց միևնույն ժամանակ հաճելի էր ոտքիդ տակ զգալ հողը, արև հոտոտած հողը... Եվ դպրոց գնալիս կոշիկները, որ մի քանի տարի անընդմեջ նույնն էին, սեղմում էին կոշտուկներս, հիշեցնում, որ ամառանը փողոցներում միրգ էի վաճառում... Ես ապշահար նայում էի, թե ինչպես էին ծնողներն իրենց երեխաներին ուղեկցում դպրոց, ինչպես էին պայուսակներն իրենք բռնում, որ երեխաները ծանրություն չզգան: Ես գնում էի դպրոց մենակ, որովհետև մեր տանը ոչ ոք ժամանակ չուներ, իսկ պայուսակի ծանրությունն ի՞նչ էր ծանր դույլերի դիմաց:

Մի անգամ մեր այգի լրագրող էր եկել: Տեսախցիկը տեսնելով փախա՝ թաքնվեցի ծառի հետևում: Բայց նա նկատեց ինձ ու մոտեցավ՝առանց տեսախցիկի.

- Ի՜նչ գեղեցիկ են աչքերդ, փոքրիկ:

Ոչ ոք ինձ չէր ասել այդ մասին...

Հետո, տեղի տալով նրա հորդորներին, սկսեցի զրուցել հետը:

- Ի՞նչ երազանք ունես, սևաչյա՛ գեղեցկուհի,- հարցրեց այդ համակրելի աղջիկը:

- Երազում եմ ես էլ դպրոց գնալ սեպտեմբերի մեկին, հագնել սպիտակ վերնաշապիկ, նոր կոշիկներ և ունենալ աշխարհի ամենագեղեցիկ պայուսակը:

Նա թաց աչքերով նայեց ինձ, ժպտաց ու մի գեղեցիկ գրիչ պայուսակից հանելով՝ նվիրեց ինձ:

Ե՞րբ է գալիս սեպտեմբերի մեկը...

Օֆելի ԴԱԼԼԱՔՅԱՆ
ՀՊՄՀ շրջանավարտ

Վերադարձն սպասված էր

Երկար սպասված ուսումնական տարվա մեկնարկը վերջապես տրվեց: Ճիշտ է, այս անգամ սովորական դարձած սեպտեմբերի մեկի փոխարեն սեպտեմբերի տասնհինգին, բայց ավելի սպասումով, կարոտով և դրական հույզերով: Հասցրել էինք կարոտել թե՛ վարժարանին, թե՛ ուսուցիչներին և, իհարկե, դասարանի բոլոր աշակերտներին:

Գնահատելով հեռավար ուսուցման ընթացքում ուսուցիչների ջանքերը և այդ գործընթացում ունեցած հաջողությունները, միևնույն է, վերադարձն ուսումնական հաստատություն չափից շատ սպասված էր: Այսօր վարժարան ենք եկել այն գիտակցությամբ, որ պետք է պահպանենք բոլոր նախատեսված կանոնները, որպեսզի շարունակենք ուսուցումն այս եղանակով:

Վերջապես սկսելով հաճախել դպրոց՝ բոլորս լի ենք ոգևորությամբ, վերջին փոփոխությունների հանդեպ ունեցած ակնկալիքներով ու հաշտեցման փորձերով: Հանդիպելով տնօրեն տիկին Նաիրա Սաֆարյանին և ուսուցիչներին, նրանցից լսելով խրախուսական, լավատեսական ու ոգևորիչ խոսքեր՝ մենք լցվեցինք հույսով ու վառ լավատեսությամբ, որ միասին հավատալով և պահպանելով հակահամաճարակային բոլոր կանոնները, կհաղթահարենք բոլոր խոչընդոտները:

Միլենա ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
ՀՊՄՀ վարժարանի հումանիտար հոսքի 12-րդ դասարանի աշակերտուհի

ԵՌԱՄՅԱ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ տեխնոլոգիաների հաղթարշավը գիտության ամենատարբեր ճյուղերին պարտադրեց բնության և հասարակության մեջ տեղի ունեցող օրինաչափությունների և գործընթացների էությունն ուսումնասիրելիս չբավարարվել գիտակարգային (առարկայական) մոտեցումներով: Արդյունքում 20-րդ դարի 60-70-ական թվականներին ձևավորվեց առարկայական ուսումնասիրության նորովի մոտեցում՝ «Transdisc-iplinary» (այսուհետև տեքստում TD թարգմանաբար *անդրգիտակարգային*), որն ինչպես բնութագրում է գաղափարի հեղինակը՝ Ժան Պիաժեն (Jean Piaget 1970թ.) «Միջգիտակարգային հետազոտությունների փուլից հետո պետք է ակնկալվեր որպես ավելի բարձրակարգ հետազոտական փուլ, չսահմանափակելով գիտակարգային հարաբերությունները, այլ ընդհակառակը՝ առանց հստակ տարանջատելու գիտակարգի սահմանները, այդ հարաբերությունները տեղակայում է հենց համակարգի հիմքում»:

Ավստրիացի աստղաֆիզիկոս Երիխ Յանչն էլ (Erich Jantsch), կիսելով Ժան Պիաժեի կարծիքը, հավելում է՝ «Անդրգիտակարգայինը (TD) դա մի տարածք է, առանց գիտակարգային որոշակի և կայուն սահմանների, ուստի պետք է ավելի վեր դասվի գիտակարգային այլ մեթոդներից: Այն պետք է վերածվի բոլոր տիպի գիտակարգային կրթական համակարգերի և նորարությունների կանոնակարգողի, ընդհանուր աքսիոմատիկ մոտեցմամբ»:

Այս մոտեցումը կիրառելի է փորձագիտական համակարգերում և խմբերում, քանի որ առավել ընդհանրական է՝ ուղղված հարցի լուծման գիտակարգային շրջանակների բացահայտմանը՝ միջգիտակարգայինից վերացականության ավելի բարձր մակարդակ տեղափոխելու համար:

ՀՊՄՀ Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետի աշխարհագրության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնում 2017-18 թթ. «Լեռնային տարածքների կայուն զարգացում և ռեսուրսների կառավարում» միջազգային գիտական ծրագրի շրջանակներում (SCOPES), գործընկերներ՝ Բեռնի (Շվեյցարիա) և Թբիլիսիի (Վրաստան) համալսարաններ), իրականացվեցին տեսական և գործնական դասընթացներ Հայաստանի Հանրապետության և Վրաստանի լեռնային բնակավայրերում: Ուսումնասիրություններն ուղղված էին լեռնային բնակավայրերի հիմնախնդիրների բացահայտմանը, հիմքում ունենալով անդրգիտակարգային (TD) մոտեցումներ և մեթոդներ: Ուսանողների համար առանձնակի հետաքրքրություն էր ներկայացնում դասընթացների ձևաչափը, տեսական դասընթացները իրականացվում էին հետազոտվող տարածքներում իրական օբյեկտների առկայության պայմաններում, իսկ գործնական ուսումնասիրությունները՝ պարզ դիտարկումներից վերաճում էին բնակչության շրջանում սոցիարցումների, ընդ որում հարցաշարերը մշակվում էին տեսական դասընթացների ժամանակ, ըստ ուսումնասիրման տարածքի և թեմայի:

Տեսական դասընթացների ժամանակ ձևավորվեցին մի շարք նորարար մոտեցումներ, երբ չկային անմիջական հարցման հնարավորություններ: Ուսումնասիրությունների արդյունքների հիմնավոր վերլուծության համար կիրառվեց նաև եռանկյունավորման մեթոդը (Trangulation), որի օգնությամբ հնարավոր եղավ ստուգել ստացված քանակական և որակական մի շարք տվյալներ:

Սոցոլոգիական հետազոտություններում նմանօրինակ մեթոդների միասնական կիրառումը ուսանողներին հնարավորություն է տալիս առավել ճշգրիտ գնահատել իրենց կողմից հետազոտվող խնդիրների իրական պատկերը, բացահայտել դրանց արմատները: Այդ նպատակով SCOPES ծրագրի կողմից առաջարկվեց ուսանողների կողմից իրականացնել փորձարարական ներդրումներ (փոքր դրամաշնորհի ձևով) ուսումնասիրվող բնակավայրերում, իրենց կողմից ընտրված շահառուների շրջանում: Նման գործընթացի դեպքում միայն հնարավոր է կիրառել ուսումնասիրման անդրգիտակարգային (TD) մեթոդները, բացահայտել առաջադրված սցենարի ռիսկայնությունը, աջակցող և խանգարող հանգամանքները, բացառելով հարցի լուծման լոկ տեսական մոտեցումը: Ուսանողների համար գիտափորձի նման մոտեցումները լուրջ մարտահրավեր էին, բայց և արդյունավետ փորձ հետագայում նմանօրինակ սցենարներ կառուցելու և իրականացնելու համար:

Այս ուսումնասիրությունների արդյունքների և հատկապես դրանց գործնական լուծումների սցենարների առաջադրումն անհնարին կլիներ ստուգել առանց երկրատեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման: Հաճելի էր տեսնել մի քանի եվրոպական, վրաստանյան և հայ ուսանողների համագործակցությունը երկրատեղեկատվական համակարգերի տեխնոլոգիական կիրառման գործընթացներում:

Նկարում՝ SCOPES ծրագրով իրականացվող ուսումնասիրությունների ստեղծագործական խումբը (կադր Ֆիլմից)

Ծրագրի եռամյա ուսումնասիրության արդյունքում, օգտագործելով ձեռք բերված փորձը, հայկական և վրացական կողմերը ազգային լեզվով և անգլերեն զուգահեռ թարգմանությամբ կազմեցին և հրատարակեցին դասագրքեր, որոնք բարձր գնահատական ստացան Բեռնի համալսարանի կողմից:

SCOPES ծրագրով երկրորդ փուլում ՀՊՄՀ աշխարհագրության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնը Բեռնի համալսարանի (Շվեյցարիա) Շրջակա միջավայրի զարգացման կենտրոնի (CDE) կողմից ստացավ գործնական ուսումնասիրության պատվեր: Այս հանգամանքը վկայում է մեր ամբիոնի և իր արտասահմանյան գործընկերների հետ ծրագրի՝ նախորդ փուլում իրականացրած համագործակցության լուրջ նվաճումները:

Ծրագրի երկրորդ փուլի հետազոտություններում ներգրավված էին ամբիոնի մագիստրոսները: Հետազոտությունները մեկնարկեցին 2018 թվականի փետրվարին և ավարտվեցին 2019 թվականի նոյեմբերին: Ուսումնասիրության թեման արդի իրավիճակում աշխարհում ծավալվող բնակչության տեղաշարժն էր, կամ ինչպես ընդունված է ասել՝ միգրացիան:

Հարցն այն է, որ Շվեյցարական զարգացման գրասենյակը ՀՀ Սյունիքի մարզում մի քանի տարի է՝ իրականացնում է խոշոր եղջերավոր անասապահության խթանման ծրագիր, նպատակ ունենալով նվազեցնել լեռնային բնակավայրերի բնակչության շրջանում միգրացիայի միտումները: Մեզ առաջարկվող հետազոտության նպատակն էր՝ բացահայտել Սյունիքի մարզի Սիսիանի տարածաշրջանի բնակավայրերում բնակչության շրջանում միգրացիոն միտումների և Շվեյցարական զարգացման գրասենյակի ծավալած գործունեության միջև առկա կապը, ներդրումների արդյունավետության իրական պատկերը:

Առաջադրված հետազոտության իրականացումը բավականին խորքային հարցադրումներ ուներ, ուստի մեր կողմից ընտրվեց նմանատիպ տարածքների զարգացման համեմատության մեթոդը: Ընտրվեցին լեռնային բնակավայրեր ՀՀ Արագածոտնի մարզում, ուր բնակչության հիմնական զբաղմունքն ու կենսապայմանները նմանատիպ էին, և որտեղ անասնապահության բնագավառում դեռևս ներդրումային գործընթաց չէր իրականացվել: Ուսումնասիրության հիմքում կրկին դրվեցին անդրգիտակարգային (TD) մոտեցումները: Մեր կողմից նախորդ փուլում մշակված և փորձարկված մեթոդաբանությամբ, Սիսիանի տարածաշրջանի բնակավայրերի բնակչության շրջանում, տարվա տարբեր ամիսներին իրականացվեցին սոցիոլոգիական հարցումներ: Հարցումներին զուգահեռ իրականացվեցին շրջայցեր անասնապահական տնտեսություններում, ուր հարցադրումներն իրականացվում էին նկարահանվող հարցազրույցների ձևով: Նույնը կրկնվեց նաև Արագածոտնի տարածաշրջանի լեռնային բնակավայրերում, միայն այն տարբերությամբ, որ այստեղ ուսումնասիրությունների արդյունքների հիմնավոր վերլուծության համար կրկին կիրառվեց փոքր դրամաշնորհային ներդրումների եղանակը: Այս դեպքում իբրև շահառուներ հանդես եկան համայնքները: Բարձր լեռնային բնակավայրերի բնակֆոնդը մասնակի է օգտագործվում և դժվարություններ կան ստուգելու մի շարք քանակական և որակական անհրաժեշտ տվյալներ, ուստի կրկին կիրառվեց եռանկյունավորման մեթոդը:

Ստեղծագործական խումբը հետազոտության արդյունքը ներկայացրեց «Մենք ուժեղ ենք մեր հողի վրա» վավերագրական ֆիլմի ձևով, ուր շահառուներն իրենց տնտեսության տարածքում, կենդանի խոսքով ներկայացնում էին ձեռք բերած հաջողություններն ու մեկնաբանում հիմնախնդիրները, միաժամանակ ներկայացնելով նաև բնակավայրերում միգրացիայի առկա պատկերը, միտումներն ու պատճառները:

Սոցիոլոգիական հարցախույզի, ցուցիչների կիրառման և եռանկյունավորման միասնական արդյունքում կազմվեցին բնակավայրերի խնդիրներն արտացոլող ԵՏՀ քարտեզներ, որոնք նույնպես տեղ գտան ֆիլմում: Ֆիլմը դրական գնահատվեց պատվիրատուի կողմից, իսկ Շրջակա միջավայրի և զարգացման կենտրոնը (CDE) դիտարկվեց իբրև հետազոտման նորովի մոտեցում և մեթոդ: Ցավով պետք է նշել, որ 2020 թ. ձևավորված համաճարակի պատճառով ստեղծագործական խումբը չկարողացավ ոչ միայն մեկնել Շվեյցարիա՝ տեղում ներկայացնելու հետազոտության արդյունքներն ու ֆիլմը, այլև իրականացնել հետազոտական աշխատանքների նոր պատվերը:

Իբրև եզրակացություն ներկայացնենք մեկ կարևոր հանգամանք, թե ինչու SCOPES ծրագրում նման գիտափորձի համար ընտրվեց մանկավարժական բուհը: Խնդիրն այն է, որ ներկա իրավիճակում գյուղական, առավել ևս լեռնային բնակավայրերում, առանձնակի դերակատարում ունի աշխարհագետ ուսուցիչը: Նրա սոցիոլոգիական հարցումների և դրանցում առկա անդրգիտակարգային (TD) մոտեցումների ու մեթոդների, ինչպես նաև տարածական բազմապիսի տվյալների ու երկրատեղեկատվական տեխնոլոգիաներում դրանց կիրառման իմացությունը, մարդկանց հետ աշխատելու մանկավարժական ունակությունը անփոխարինելի են դարձնում ուսուցիչ աշխարհագետի դերը համայնքի կայուն կառավարման խնդիրներում:

Աշոտ ԽՈՆՅՅԱՆ
Աշխարհագրության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, աշխարհագրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, SCOPES ծրագրի հայաստանյան համակարգող
Տիգրան ԲԱԲԱՅԱՆ
Ծրագրի աշխատանքների կազմակերպիչ՝ ԱԴՄ ամբիոնի ԵՏՀ քարտեզագիր

ՀՊՄՀ Սկզբնական կրթության ֆակուլտետի «Մանկավարժություն և տարրական ուսուցման մեթոդիկաներ» մասնագիտության առաջին կուրսի հետ այս հանդիպումն անսովոր էր. մանկավարժական գիտությունների դոկտոր Ջուլիետա Գյուլամիրյանի դասին նորեկները փորձեցին հաղորդակցվել և միմյանց ճանաչել ջերմ ու անկեղծ մթնոլորտում: Հանդիպումը խոստումնալից էր:

Ամառային արձակուրդները՝ Հայաստանում

ՌԴ-ում ՀՀ դեսպանությանը կից Մոսկվայի «Վերածնունդ» հայկական կիրակնօրյա դպրոցի սաները, որոնք իրենց ամառային արձակուրդներն են վայելում հայրենիքում, դպրոցի տնօրեն, մանկավարժական գիտությունների թեկնածու Շողիկ Փահլևանյանի ուղեկցությամբ ուսուցողական-ճանաչողական նպատակով Երևանում այցելեցին «Միացյալ խաչ» հուշարձանին, որը խորհրդանշում է հայ և ռուս ժողովուրդների դարավոր բարեկամությունը:

Երևանում վերոնշյալ հուշարձանի բացման հանդիսավոր արարողությունը տեղի է ունեցել 2013 թվականին: Քանդակագործներն են Ֆրիդրիխ Սողոյանը (Հայաստանի, Ռուսաստանի և Ուկրաինայի ժողովրդական նկարիչ), որդիներ Վահե Սողոյանը (Ռուսաստանի վաստակավոր նկարիչ) և Միքայել Սողոյանը (Հայաստանի վաստակավոր նկարիչ), իսկ Ճարտարապետները՝ հայր և որդի Ռազմիկ Մանուկյանն ու Տիգրան Մանուկյանը:

Հիշարժան է, որ Ռուսաստանի մայրաքաղաքում նմանատիպ հուշարձան է տեղադրվել դեռևս 1997 թվականին՝ Մոսկվայի 850-ամյա հոբելյանի առթիվ:

Հավելենք, որ «Միացյալ խաչ» հուշարձանի պատվանդանի վրա փորագրված է. «Օրհնյալ է հայ և ռուս ժողովրուրդների դարավոր բարեկամությունը» գրությունը:

Մոսկվայի հայ երեխաների և ուսուցիչների այցելությունները շարունակվում են՝ բացահայտելու Հայաստանի նոր տեսարժան վայրեր:

ԵՐԲ ԳԱԼԻՍ ԷՐ ՍԵՊՏԵՄԲԵՐԸ

...1958 թվականի օգոստոս ամիսն էր: Օրը չեմ հիշում: Հայրս ձեռքիցս բռնած ինձ տարավ ծանոթ կոշկակարի մոտ.

- Վարպետ Մխո, մի զույգ կոշիկ պիտի կարես,-հետո հպարտ-հպարտ ավելացրեց,- դպրոց պիտի գնա տղաս:

Արդեն մի առիթով պատմել եմ, որ Վարպետ Մխիթարը՝ Մխոն, Բեյրութից էր Հայաստան եկել, ու ինձ լավ էի զգում, ինչ-որ տեղ հպարտ, որ անուն հանած վարպետը պիտի ինձ համար կոշիկ կարի, ու ես նրա ամենակրտսեր հաճախորդն եմ... Վարպետ Մխոն բարի ժպիտով ոտքից գլուխ չափեց ինձ ու դարձավ հորս.

- Մանչերու ոտնաման չեմ կարե, բայց քեզի ալ չեմ կրնա մերժել,-ասաց նա ու կանչեց արհեստանոցի խորքում գլուխը կախ, իր գործն անող օգնականին.

- Վարդա՜ն, թուղթն ու մատիտն առ, հոս եկուր...

Վարդանը մի մեծ, ճերմակ թուղթ ու մատիտը առած եկավ, թուղթը փռեց գետնին:

- Մանչս, ոտքդ դնե՞ս ճերմակին,- խնդրեց վարպետ Մխոն:

- Ձա՞խը, թե աջը,- հարցրի ես:

- Աջը, աջը,-նույն բարի ժպիտով շարունակեց վարպետն ու հորս ասաց.

- Աչքաբաց մանչ կերևի...

Օգնականը՝ Վարդանը, կռացավ, գծեց՝ նկարեց ոտնաթաթս ճերմակ թղթին ու դիմելով վարպետին՝ ասաց.

-Եղած է...

Ոտնաթաթիս դրոշմը, պատկերը թղթին կարծես ստորագրություն լիներ. ՀՐԱԺԵՇՏԻ ստորագրություն, մեր թաղի նեղլիկ փողոցներին, ոտաբոբիկ անհոգ մանկությանը, որը շուտով բանտվելու էր ՎԱՐՊԵՏ ՄԽՈՅԻ կարած ոտնամանում... Մի քիչ սեղմելու էր, մի քիչ ցավեցնելու, բայց մի ուրիշ ԱՇԽԱՐՀ էի ոտքս դնելու...

...1958 թվականի օգոստոս ամիսն էր...

Սպարտակ ՂԱՐԱԲԱՂՅԱՆ



«Սփիւռք» գիտաուսումնական կենտրոնը ուրախությամբ յայտնում է, որ լոյս է ընծայել վիթխարի գրագէտի, մեծանուն ՅԱԿՈԲ ՕՇԱԿԱՆԻ «ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ» քննական բնագրերի առաջին հատորը: Հեղինակի առաջին՝ «Խոնարհները» ժողովածուից ճիշդ 100 տարի անց տպագրուած այս մեծածաւալ գիրքն ընդգրկում է փոքր արձակն ամբողջութեամբ՝ քերթուածներ, այդ թւում՝ արձակ բանաստեղծութիւններ, պատմուածքներ, հէքեաթներ եւ պատկերներ՝ անհրաժեշտ գիտական

ՔՆՆԱԿԱՆ ԲՆԱԳԻՐ. ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՕՇԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՐԸ

ծանօթագրութիւններով, բառարանով, անձնանունների եւ գրականութեան ծաւալուն ցանկերով:

Յակոբ Օշականի երկերի՝ լիակատարութեան ձգտող այս ժողովածուն յաւակնում է ամբողջացնել, եւ որ կարեւորն է, համեմատական ճանապարհով միասնական դարձնել գրողի հսկայական ժառանգութեան՝ վերջին հարիւր եւ աւելի տարիների տարաբնոյթ հրատարակութիւնների գիտական նկարագիրը՝ մատենագիտական քննական լոյսի տակ:

Գրքի խմբագիրներ Պրոֆ. Սուրէն Դանիէլեանը եւ դոցենտ Քնարիկ Աբրահամեանը ելել են ճանաչողական այն հիմնադրոյթից, որ Յակոբ Օշականի ստեղծագործական կիզակէտը եղել է անդուլ ու տեւական երկխօսութիւնը համաշխարհային գրական-փիլիսոփայական բարձրաբերձ մակարդակ պահած, շարժում եւ աշխարհայեացք ձեւաւորած տիտանների հետ: Նրանք վերհանել են դարասկզբի՝ ողբերգականօրէն ներհակ ժամանակի եւ ազգային բաւիղներում շլմորած անհատի երազանքը, ներաշխարհը, հայթուրք բազմաձալ փոխյարաբերութիւնները, Պրուսայի աշխարհում ապրող հայութեան տառապանքն ու ինքնութեան դրսեւորումները:

Նկատենք, որ դիւրին չի եղել կազմողների ճանապարհը, որը ձգուել է 2011 թուականից ի վեր: Նրանք յաղթահարել են օշականեան բնագրին մօտենալու դժուարութիւններ՝ սկսած նիւթերի ընդգրկումից՝ ձեռագրերից, ժամանակի մամուլի որոնումներից մինչեւ ծանօթագրման անհրաժեշտ մանրամասները, խմբագրական համեմատական տքնանքը, շտկումների եւ մեկնումների անվերջանալի շղթան:

Գիրքը տպագրութեան երաշխաւորել է Խ. Աբովեանի անուան հայկական պետական մանկավարժական համալսարանի գիտական խորհուրդը: Արտաքին գրախօսներն են ԵՊՀ հայ գրականութեան ամբիոնի վարիչ, պրոֆ. Սամուէլ Մուրադեանը եւ պատմական գիտութիւնների դոկտոր Յակոբ Չոլաքեանը: Հրատարակութիւնը հովանաւորել են ստամբուլահայ մտաւորականներ՝ ուղեգրող Արամ Գամպուրեանն ու թատերագիր, երջանկայիշատակ Արման Վարդանեանը:

Սիրելի՛ ընթերցողներ, խմբագիրները Օշականի փոքր արձակը երկիւղածութեամբ եւ սիրով յանձնում են հայրենի եւ սփիւռքահայ ընթերցողական լայն ու խստապահանջ լսարանի դատին:

Բարի՛ ընթերցում:

Առջեւում գրաստէր բարձրաճաշակ հանրութեանը սպասում են Յակոբ Օշականի խոհագրութիւնները, վէպերը, թատրերգութիւնները, «Համապատկեր արեւմտահայ գրականութեան» եւ քննադատական մեկնութիւնների այնքան սպասուած գիտական հատորները:

«Սփիւռք» գիտաուսումնական կենտրոնի լրատուութիւն

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանը հայտարարում է 2020/2021 ուսումնական տարվա հայցորդական (հեռբուհական) կրթության ընդունելություն (վճարովի հիմունքներով):

Հայցորդական (հեռբուհական) կրթության ընդունելության մրցույթին կարող են մասնակցել պետական և հավատարմագրված ոչ պետական բուհերի շրջանավարտներ, ովքեր ունեն մագիստրոսի կամ բարձրագույն կրթությամբ մասնագետի դիպլոմ:

Դիմորդները ներկայացնում են հետևյալ փաստաթղթերը.

1. Դիմում համալսարանի ռեկտորին՝ նշելով ընտրած մասնագիտությունը:
2. Մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի կամ օրդինատորի դիպլոմի և դրա հավելվածի պատճենները (օտարերկրյա պետություններում բարձրագույն կրթություն ստացածների համար՝ փաստաթուղթ նրանց կրթության համարժեքության մասին).
3. Անձնագրի պատճեն
4. 2 տպագրված հոդված
5. 4 լուսանկար (3x4 չափի)
6. Ինքնակենսագրություն (CV)
7. Աշխատանքային գրքույկի պատճեն (եթե առկա է)
8. Քաղվածք աշխատանքային գրքույկից (եթե դիմորդն աշխատում է):

Փաստաթղթերն ընդունվում են հայտարարության հրապարակման օրից մինչև հոկտեմբերի 1-ը ներառյալ:

Տեղեկությունների համար դիմել հետևյալ հասցեով՝ Երևան, Տիգրան Մեծի 17, 3-րդ հարկ, Գիտահետազոտական կենտրոն՝ 318 սենյակ, հեռ. 59-70-29:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Առկա ուսուցմամբ սովորող ուսանողների 2020-2021 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ուսման վարձի զեղչի դիմումները համապատասխան փաստաթղթերով ընդունվում են սեպտեմբերի 15-ից մինչև հոկտեմբերի 13-ը:

Գրանցման վկայական՝ 01Մ00184 տրված է 26.03.2008 թ.
Հասցեն՝ Տիգրան Մեծի 17, հեռ. 59-70-97:
էլ. փոստ՝ Newspaperaspu.am, asryansilva@gmail.com
Տպագրված է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպագրատանը:
Հասցեն՝ Արշակունյաց 2
Տպաքանակը՝ 1800 օրինակ: Ծավալը՝ 2 տպ. մամուլ

Թերթի նյութերի արտատպումներն առանց խմբագրության համաձայնության արգելվում է:
Հղումը պարտադիր է: Թերթը տարածվում է անվճար:
Հանձնված է տպագրության 18.09. 2020 թ.

Թերթը կարող եք կարդալ ՀՊՄՀ կայքում՝ www.aspu.am

Գլխավոր խմբագիր՝
Սիլվա ԱՍՐՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու
Էջադրումը՝ Պետրոս ՎԱՐԴԱՆՅԱՆԻ
Համարի պատասխանատու՝ Սիլվա ԱՍՐՅԱՆ